

Համահայկական Հանրային Եզրաբանական Կոմիտէ (ՀՀԵԿ) կամ Տերմինաբանական Կոմիտէի պերճանքն ու թշուառութիւնը

Խորհրդային ժամանակներում Հայաստանում գործում էր Մինիստրների Սովետին առընթեր Տերմինաբանական Կոմիտէն: Նրա գործունէութիւնը արժանի է համակողմանի մանրամասն ուսումնասիրութեան ցոյց տալու համար մի կողմից՝ նրա կատարած հսկայական աշխատանքը (մենք այն անուանում ենք «պերճանք»), բայց նաեւ որոշ հարցերում ռուսերէնին արուած զիջումները: Հայաստանի անկախացումից յետոյ կատարուեցին մի շարք փոփոխութիւններ, որոնցից ամենաշականք՝ Տերմինաբանական Կոմիտէն վերանուանուելով Հանրային Բարձրագոյն Խորհուրդ ստացաւ եռաստիճան ենթակայութիւն՝ որպէս Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան ենթակայ Լեզուի Պետական Տեսչութեան ենթակայ մարմին: Այդ որոշման անհեթեթութեան մասին շատ է ասուել, սակայն ընթերցողին մի փոքր զուարճացնելու համար կ'աւելացնենք հետեւեալը. Տերմինաբանական Կոմիտէն պարբերաբար լոյս էր ընծայում «Տերմինաբանական եւ ուղղագրական տեղեկատու», որի անփոփոխ կազմողն ու խմբագիրը միշտ եղել է Յովհաննէս Բարսեղեանը: Եւ ահա տեղեկատուի վերջին՝ վեցերորդ հրատարակութեան «Երկու խօսք»-ում նոյն խմբագիրը «մոռանում է» այդ Բարձրագոյն Խորհուրդի ենթակայութիւնը՝ այն անուանելով կառավարութեանն առընթեր: Վստահաբար կարելի է ասել, որ յարգարժան խմբագիրը ոչինչ էլ չի մոռացել, այլ պարզապէս արտայայտել է իր անհամաձայնութիւնը այդ անհեթեթ եռաստիճան ենթակայութեան նկատմամբ:

Բայց այս բոլորը այնքան էլ կարեւոր չեն. այլ շատ աւելի կարեւոր է այն, որ վերջին շուրջ երկու տասնամեակում Տերմինաբանական Կոմիտէն թէ Բարձրագոյն Խորհուրդը չի կատարել նոր պայմաններում իր անելիքները (մենք այն անուանել ենք «թշուառութիւն»): Սա նոյնպէս մանրամասն ուսումնասիրութեան կարիք ունի, բայց դա այստեղ չենք անի, այլ կ'անցնենք հիմնական նիւթին:

Հայաստանի անկախացումից անմիջապէս յետոյ, երբ արդէն վերացել էր խորհրդային պարտադրանքը, Տերմինաբանական Կոմիտէն պէտք էր անյապաղ դառնար Համահայկական կառոյց՝ ներառնելով արեւմտահայերէնը, նաեւ գրաբարը (այնտեղ նոյնպէս կանոնարկման հարցեր կան), եւ լծուէր ծով աշխատանքը կատարելուն: Ըստ ամենայնի, նման բան չի սպասուում նաեւ հիմա՝ աւելի քան քսան տարի անց, եւ այդ իրադրութեան մէջ, որպէս հոգու ճիշդ, մենք՝ մի խումբ մտաւորականներ, ազդարարում ենք Համահայկական Հանրային Եզրաբանական Կոմիտէ (այսուհետեւ՝ ՀՀԵԿ) ստեղծելու մասին:

Անմիջապէս բացատրենք, թէ ինչի մասին է խօսքը: Ինչպէս որ շատ երկրներում ժողովուրդը (կամ բանակը)՝ յոգնած պետութեան անգործունէութիւնից, իր ձեռքն է վերցնում իշխանութիւնը եւ յայտարարում, որ այն կը վերադարձնի պետական մարմիններին կարգ ու կանոն հաստատուելուց յետոյ միայն, մենք էլ ժամանակաւորապէս մեր ձեռքն ենք վերցնում Եզրաբանական Կոմիտէի գործառոյթը՝ կարճ ժամանակում լրացնելու համար բաց թողուած աշխատանքը: Անմիջապէս ասենք, որ մենք մեզ իրաւասու չենք համարում Եզրաբանական Կոմիտէի անունից ըրոշումներ

կայացնել, այլ պիտի անենք միայն հետեւեալը՝ ՀՀԵԿ-ի անունից մեծ թուով որոշման նախագիծը պիտի ներկայացնենք հայրենի հասարակութեանը՝ ցոյց տալու համար այն ծով աշխատանքը, որ պէտք է արուած լինէր, բայց չի արուել: Կարծում ենք, որ այդ իրավիճակը կը ստիպի հայրենի իշխանութիւններին սթափուել եւ ստեղծել համահայկական մի համապատասխան կառոյց . այն կարելի է անուանել հին ձեւով՝ Եզրաբանական Կոմիտէ (բայց, ի հարկէ, ոչ այլեւս Տերմինաբանական), կամ Բարձրագոյն Խորհուրդ, բայց կարեւորը՝ այն պէտք է ընդգրկի թէ՛ հայրենի եւ թէ՛ սփիւռքի մասնագէտներ: Այստեղ հարկ ենք համարում պարզաբանել, թէ ինչու մինչեւ օրս չի իրագործուել այս՝ ըստ ամենայնի պարզ գաղափարը: Ահա, ուրեմն, մենք յայտարարում ենք, որ այս անցանկալի իրավիճակի հիմնական պատճառը բոլորովին անհարկի դիմակայութիւնն է, որ առաջացել է դասական ուղղադրութեան՝ ամէն գնով հայրենիքում վերականգնելու ջատագովների եւ դրան դիմադրող հայրենի լեզուագէտների՝ ներառեալ իշխանաւորներին, միջեւ:

Այս վիճակից պէտք է դուրս գալ, եւ դրա լաւագոյն ձեւը կը լինի համահայկական լեզուական մի կառոյցի ստեղծումը, որում կը համագոյակցեն այսօրուայ ախոյան կողմերը:

Ասուածից պարզ դարձաւ, որ ՀՀԵԿ-ի ստեղծումը միայն մի նպատակ է հետապնդում. ակնյայտ դարձնել ու ստիպել համահայկական մի պետական կառոյցի առաջացումը:

Վերը ասուեց, որ նորաստեղծ ՀՀԵԿ-ն իր գործունէութիւնը պիտի սկսի տասնեակներով որոշման նախագիծեր հրապարակելով: Ստորեւ բերված Յաւելուածները պարունակում են այդպիսիների մի քանի օրինակ: Անմիջապէս ասենք, որ մենք առայժմ թաքցնում ենք աւելի կարեւոր՝ լեզուի մի շարք հիմնարար հարցերին վերաբերող առաջարկները, այլ ներկայացնում ենք երեք ամենապարզ օրինակներ, որոնք ընտրուած են հետեւեալ սկզբունքով.

1. Հայաստանեան արեւելահայերէնին եւ հայաստանեան ուղղադրութեանը վերաբերող հարցի մասին որոշման նախագիծ.
2. Արեւմտահայերէնին եւ հետեւաբար դասական ուղղադրութեանը վերաբերող հարցի մասին որոշման նախագիծ.
3. «Խառը», այսինքն վերոյիշեալ երկուսին էլ վերաբերող հարցի մասին որոշման նախագիծ:

Յաւելուած 1

Որոշման նախագիծ

Հայերէնի Բարձրագոյն Խորհրդի «Տերմինաբանական եւ ուղղադրական տեղեկատու»ի մէջ

մի ճշտում մտցնելու մասին

Ստորեւ բերուած պատկերը վերոնշեալ Տեղեկատուի 2006 թ. հրատարակութեան 284-285 էջերն են, որի վրայ մենք ձեռագրով աւելացրել ենք առաջարկուող ուղղումները (տե՛ս կից նշոցը՝ անուանուած Capital U): Դրանց անհրաժեշտութիւնը բխում է այն բանից, որ հայաստանեան ուղղագրութեամբ ու-ն համարւում է այբուբենի տառ, չնայած որ այն բաղկացած է երկու գրանշանից՝ ո եւ լ : Այս հանգամանքը հանգեցնում է հետեւեալ հակասութեանը. երբ ասում ենք ու փոքրատառ եւ ՈՒ մեծատառ, բնականաբար հասկանում ենք, որ այդ տառի մի տեսակ մեծատառ կայ, մինչդեռ իրականում այդպէս չէ. ու տառը (յիշեցնենք, որ այն համարում ենք այբուբենի տառ) փաստօրէն ունի երկու տեսակ մեծատառ, որոնք են ՈՒ եւ Ու: Այս բանը յստակ չպատկերացնելու պատճառով հետեւեալ երկու տեսակ սխալներն են առաջ գալիս. երբեմն գրում են, ասենք, ՈՒրարտու, իսկ երբեմն էլ ՈւՐԱՐՏՈՒ, փոխանակ գրելու Ուրարտու եւ ՈՒՐԱՐՏՈՒ:

Պատկերի մէջ ձեռքով արուած մեր ուղղումը լաւագոյն ձեւը չէ, պարզապէս այն ամենահեշտ ձեւով բացատրում է խնդիրը: Ուրեմն, պէտք է ինչ-որ ձեւով լուծել մեծատառ ու-ի խնդիրը:

(Քանի որ սա ընդամէնը ՀՀԵԿ-ի կողմից առաջադրուած որոշման նախագիծ է, մենք այստեղ չենք ներկայացնում ուղղման՝ մեր առաջարկած տարբերակը. մեր նպատակը հարցը բարձրացնելն էր):

Յաւելուած 2

Որոշման նախագիծ

Օտար բառերու մէջ [վ] հնչիւնի գրութեան մասին

Դասական ուղղագրութեանը հաւատարիմ մնացած սփիւռքահայերը (մեծամասնութեամբ արեւմտահայեր, բայց նաեւ պարսկահայեր) յատուկ գուրգուրանքով կը վերաբերին լ տառին, որը անարդարօրէն բռնաբարուած է հայաստանեան ուղղագրութեան մէջ:

Այստեղ պիտի փորձենք ցոյց տալ, որ այդ գուրգուրանքը պէտք չէ չափազանցել...:

Ընդամին կ'առաջարկուի հետեւեալ կանոնը.

Օտար բառերու մէջ [վ] հնչիւնը պէտք է գրուի որպէս լ միայն այն պարագային, երբ այն կու գայ au եւ eu տառակապակցութիւններէն, ինչպէս՝ Աւստրալիա, Աւստրիա, Աւրորա, աւտոմատ, Եւրոպա:

Մնացած բոլոր դէպքերուն, երբ [ւ] հնչիւնը օտար բառին մէջ կը գրուի որպէս V, հայերէն պէտք է գրուի որպէս վ, ինչպէս՝ Իվ, ակտիվ, դիվերսիոն, ավիարնկերութիւն (ավիաուդի, ավիատում)։

Դիտողութիւն. եթէ բառը այլեւս չի դիտուիր որպէս օտար, այսինքն՝ «հայացած» է, ապա պէտք է գրել ւ, այլ ոչ թէ վ։ Մեզ յայտնի է միայն մէկ օրինակ՝ արխիւ բառը. այն պէտք է գրել արխիվ, որովհետեւ այն հայացած է։ Կարելի է նաեւ ըսել աւելին. եթէ երբեւիցէ գտնուի արխիւ բառի հայերէն համարժէքը, որով արխիւ-ը կը սկսի դիտուել որպէս օտար բառ, ապա այդ ժամանակ պէտք պիտի ըլլայ գրել արխիվ։

Յաւելուած 3

Որոշման նախագիծ

Կը եղանականիշ մասնիկի գրութեան մասին

Արեւմտահայերէնում կը եղանականիշ մասնիկի գրութեան կանոնը հետեւեալն է.

Եթէ յաջորդող բայը սկսում է բաղաձայնով, կը եղանականիշ մասնիկը գրուում է առանձին, ինչպէս՝ կը գրեմ, կը կարդամ, ներառեալ այն դէպքը, երբ այն դառնում է կու (կու լամ, կու գամ, կու տամ)։

Իսկ եթէ յաջորդող բայը սկսում է ձայնաւորով, ապա եղանականիշ մասնիկի ը-ն սղւում է՝ փոխարինուելով ապաթարցով, եւ ամբողջը գրւում է միասին, ինչպէս՝ կ'ուտեմ, կ'երթամ, կ'ըսեմ։

Հայաստանեան ուղղագրութեան մէջ կը գրութիւնը գոյութիւն չունի, եղանականիշ մասնիկը հանդէս է գալիս որպէս մի տառ՝ կ, որը միշտ գրւում է յաջորդող բայի հետ միասին՝ առանց ապաթարցի, ինչպէս՝ կուտեմ, կիսմեմ, կգրեմ, կկարդամ։

(Առաջարկում ենք կարգաւ Նշան Որբերեանի կից յօդուածը, որտեղ կարելի է գտնել արտառոց (թերեւս եւ զուարճալի) օրինակներ, ինչպէս՝ կկկոցեմ, կկկգեմ, կարվի՝ երկու բոլորովին տարբեր իմաստներով, կուրանա՝ երկու բոլորովին տարբեր իմաստներով)։

Այստեղ արւում է մի առաջարկ, որը, մեր կարծիքով, եզակի է իր բնոյթով։ Առաջարկում է կը եղանականիշ մասնիկի գրութեան մի կանոն, որն ընդունելի կարող է լինել թէ՛ արեւմտահայերէնի, թէ՛ արեւելահայերէնի, թէ՛ դասական եւ թէ՛ հայաստանեան ուղղագրութեան համար, եթէ կողմերը բարեացակամօրէն գնան փոքր զիջումների՝ առանց հրաժարուելու իրենց հիմնական սկզբունքներից, որով որպէս արդիւնք կ'ունենանք մի հազուագիւտ միասնական գրելաձեւ։

Կանոն. Կը եղանականիչ մասնիկը միշտ փոխարինել կ' գրականակցութեամբ, որը միշտ գրուած է յաջորդող բայի հետ միասին:

Այսպիսով, ըստ այս կանոնի, թէ՛ արեւելահայերէնում եւ թէ՛ արեւմտահայերէնում, թէ՛ դասական եւ թէ՛ հայաստանեան ուղղագրութեամբ գրուած է՝ կ'անեմ, կ'ընեմ, կ'ուտեմ, կ'գնամ, կ'երթամ, կ'գրեմ, կ'կարդամ:

Այժմ տեսնենք, թէ առաջարկուող կանոնը որդեգրելու դէպքում ինչ կ'փոխուի ուղղագրութիւններից իւրաքանչիւրում:

Հայաստանեան ուղղագրութեան մէջ փոփոխութիւնը նուազագոյն է՝ պարզապէս ամէն տեղ

կ-ից յետոյ աւելացում է ապաթարց: Այդ ձեւով մենք նոր կեանք կ'հաղորդենք այդ խեղճ նշանին՝ ապաթարցին: Իրօք, հայաստանեան ուղղագրութեամբ ապաթարցին յատկացուած է մի չնչին դեր՝ արեւմտահայերէն գրութիւններում (յիշենք Պետրոս Դուրեանի աստղ մ'ալ ես կ'երթամ խօսքերը) եւ մի քանի օտար բառերի մէջ՝ Ժաննա Դ'Արկ, Օ'Հենրի: Շեշտենք, որ ապաթարցին նոր շունչ հաղորդելը ոչ մի բանով չի սպառնում հայաստանեան ուղղագրութեանը:

Առաջարկուող կանոնը չի սպառնում նաեւ դասական ուղղագրութեանը. փոխանակ մի դէպքում առանձին կը գրելու, իսկ միւս դէպքերում միասին կ' գրելու, ոչինչ չի խանգարում միշտ երկրորդ ձեւով գրելուն (արեւմտահայերէնում մի քանի դէպքերում առանձին կ'ու գրելը կանոնին չի հակասում, քանի որ կանոնը կը-ի մասին է):

Հարկ ենք համարում կրկնել. առաջարկուող կանոնը սփիւռք-հայրենիք, արեւմտահայ-արեւելահայ միասնութեան մի բացառիկ հնարաւորութիւն է տալիս՝ առանց էական գիշումների պահանջի: